# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 105-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ. դեկտեմբերի 11
ք.Սիսիան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## Համայնքի 2019 թվականի

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ




Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթուր Սարգսյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018թ-ի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշմամբ

ՍԻՍԻԱՆ
2018Թ.

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....................................................................................................................3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ..................................................4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)....................................................................................................................6
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019Թ. ԾՐԱԳԻՐԸ ........................................18
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.........................................................19
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ..........................................21

## Ներածություն

Սիսիանի համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Սիսիանի համայնքի ՏԱՊ-ը կազմվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված «Համայնքի ՏԱՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց»-ի հիման վրա:

Սիսիանի համայնքի 2019թ. ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2019թ. Սիսիանի համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

2019թ. նախատեսված ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը ներկայացված են ըստ բնակավայրերի ու դրանց արժեքների:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է վերլուծել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

***Սիսիանը նոր որակի համայնքային միջավայրով, բարեկեցիկ ապրելակերպի պայմաններով ձևավորված, բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար գրավիչ, կրթական, մշակութային ու մարզական մակչելի և որակյալ ծառայություններով, զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար գրավիչ գործարար միջավայրով բազմաբնակավայր համայնք է։***

Աղյուսակ 1.Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 9 | 8 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 33 | 34 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 30988 | 31000 |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ) | | 2211567.0 |
| Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ) | 350/550 | 355/560 |

Աղյուսակ 2.Համայնքի ոլորտային նպատակները

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| **Ոլորտ 1. Ընդհանուր**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Սիսիանի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | • ՏԻ մարմինների կողմից ընդունված որոշումների հասանելիությունը բնակիչներին % | 95 | 100 |
| | • Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում % | 32.3 | 35.0 |
| | • Համայնքային գույքի կառավարումից առաջացած եկամուտների տեսակարար կշիռը սեփական եկամուտների կազմում % | 11.5 | 16.5 |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**<br>• Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br>• Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | • Աղբահանության ծառայության հասանելիությունը բնակավայրերում | 4 | 7 |
| | • Խմելու ջրի մատակարարման նոր կառուցված արտաքին և ներքին համակարգերի ընդհանուր երկարությունը -կմ | - | 43 |
| | • Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, % | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 55 | 60 |
| **Ոլորտ 3. Կրթություն**<br>Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | • Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, %<br>• Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների մեջ, % | 49<br><br>15 | 52<br><br>17 |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**<br>• կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը % | 35 | 40 |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը | Ոռոգման համակարգ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի կազմում % | 60 | 63 |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ**<br>Ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը՝ ճանապարհային նշանների կահավորման միջոցով | Ճանապարհների կահավորման միջոցով երթևեկության անվտանգության աճ % | 75 | 80 |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն:**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին | Համայնքի կողմից սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ % | 15 | 18 |

2. Համայնքի 2019թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Բնակավայրը |
|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | |
| 1 | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում | 282363.4 | Բոլոր բնակավայրերում |
| 2 | Համայնքային գույքի կառավարում | 0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **282363.4** | |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| 1 | Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում | 225217.32 | Սիսիան, Աղիտու, Նորավան, Աշոտավան, Ույծ, Բռնակոթ, Տոլորս բնակավայրեր |
| 2 | Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում | 90719.9 | Բոլոր բնակավայրերում |
| 3 | Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում | 1057520.9 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **1373458.12** | |
| **Ոլորտ 3. Կրթություն** | | | |
| 1 | Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում | 302716.3 | Սիսիան, Անգեղակոթ, Շաղատ, Աղիտու, Դարբաս, Շամբ, Նորավան, Աշոտավան, Ույծ, Շաքի,Տորունիք,Հացավան, Բռնակոթ, Թասիկ, Բնունիս, Որոտնավան, Վաղատին, Իշխանասար, Տոլորս բնակավայրերում |
| 2 | Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում համայնքում | 127192.2 | Սիսիան քաղաքային բնակավայր |
| **Ընդամենը** | | **429908.5** | |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | |
| 1 | Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում | 63887.0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **63887.0** | |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն** | | | |
| 1 | Խթանել գյուղատնտեսության զարգացումը | 57000.0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **57000.0** | |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | |
| 1 | Ներհամայնքային ճանապարհների պահպանում և շահագործում | 2000.0 | Սիսիան քաղաքային բնակավայր |
| **Ընդամենը** | | **2000.0** | |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| 1 | Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին | 3000.0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **3000.0** | |
| **Ընդհանուրը** | | **2211567.0** | |

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ.դրամ) | ԲԲՀ-ի բնակավայրը |
|---|---|---|---|
| Ոլորտ 1. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | |
| 1. | Լուսավորության համակարգի կառուցում | 130000.0 | Շաղատ, Բալաք, Իշխանասար, Վաղատին |
| 2. | Կ. Դեմիրճյանի անվան այգու բարեկարգում | 120000.0 | Սիսիան քաղաք |
| 3. | Հրապարակի բարեկարգում | 20000.0 | Բռնակոթ, Սիսիան քաղաք |
| 4. | Խանջյան փողոցի բարեկարգում | 45000.0 | Սիսիան քաղաք |
| 5. | Կենցաղի տան վերանորոգում | 48000.0 | Աղիտու, Ախլաթյան, Բալաք, |
| 6. | Վարչական շենքի տանիքի վերանորոգում | 32000.0 | Վաղատին, Գետաթաղ, Լոր, Որոտնավան, |
| 7. | Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում | 42000.0 | Ախլաթյան, Աղիտու, Բնունիս, Գետաթաղ, Դաստակերտ, Տորունիք |
| 8. | Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում | 70000.0 | Շաղատ, Դաստակերտ, Խանջյան 1ա, Արամ Մանուկյան 3, Սիսական 15 և 19 շենքերի |
| Ոլորտ 2. Գյուղատնտեսություն | | | |
| 1. | Ոռոգման ջրագծերի վերանորոգում և կառուցում | 110000.0 | Շաքի,Անգեղակոթ,Որոտնավան,Նորավան, Ույծ, Բնունիս, Հացավան |
| 2. | Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում /կոմբային/ | 21000.0 | |
| Ոլորտ 3. Կրթություն | | | |
| 1. | Թիվ 2 և թիվ 3 ՆՈւՀ-երի վերանորոգում | 52000.0 | Նորավան, Շամբ |
| | Ընդհանուրը | 690000.0 | |

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Սիսիանի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | • ՏԻ մարմինների կողմից ընդունված որոշումների հասանելիությունը բնակիչներին 100%<br>• Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում 35.0 %<br>• Համայնքային գույքի կառավարումից առաջացած եկամուտների տեսակարար կշիռը սեփական եկամուտների կազմում 16.5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: Աճուրդների, մրցույթների մասնակիցների բացակայություն |
| **Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել որակյալ համայնքային ծառայությունների մատուցումը | Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը - լավ | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք | Աշխատակազմի քարտուղար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ.**<br>1.Համակարգչային և մասնագիտական, այլ ծառայությունների ձեռք բերում<br>2.ՔՍԳ աշխատանքների կազմակերպում<br>3. ՔԿԱԳ ծառայության մատուցում<br>4. Սիսիանի համայնքի աշխատակազմի և 29 բնակավայրերի վարչական ղեկավարների գործունեության ապահովում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Չափագրվող և պետական գրանցման ենթակա գույքային միավորների թիվը- 60<br>• Հարկերի հաշվարկման բազաներում անճշտությունների նվազեցում, 10%<br>• ՀԿՏ համակարգի, պաշտոնական կայքի շահագործում –այո<br>• Սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը – 80%<br>• ՔՍԳ կողմից մատուցվող ծառայությունների թիվը – 11<br>• ՔԿԱԳ ակտերի թիվը – 1200<br>• Ավագանու նիստերի թիվը – 9 | Սիսիանի համայնքապետարան, «ՏՀԶՎԿ» ՀԿ, «Վեկտոր պլյուս» ՍՊԸ, ՀԾ | Բնակավայրերի վարչական ղեկավարներ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | •Ավագանու նիստերի առցանց հեռարձակում- առկա է<br>•Վերապատրաստված աշխատակիցների թիվը - 10<br>•Ծառայություններ մատուցող համայնքային կառույցների թիվը - 14<br><br>**Մուտքի ցուցանիշներ**<br>•Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում - 54<br>•Աշխատակիցների թիվը բնակավայրերում - 65<br>•Համակարգիչների թիվը - 56<br>•ՔՍ գրասենյակների թիվը - 1<br>•Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 282363.4հազ. դրամ, համայնքի բյուջե | | | | |
| **Ծրագիր 2. Համայնքային գույքի կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքային գույքի արդյունավետ և նպատակային կառավարում | Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում - 15% | Մրցույթների և աճուրդների մասին հայտարարություն-ներ, արձանագրություն-ներ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Աճուրդների, մրցույթների մասնակից-ների բացակայություն |
| **Միջոցառումներ.**<br>1.Համայնքի հողատարածքների վարձակալության մրցույթների և աճուրդ-վաճառքի կազմակերպում համաձայն գույքի օտարման 2019թ. ծրագրի | **Ելքի ցուցանիշներ**<br>•Ակնկալվող եկամուտներ գույքի կառավարումից– 55000. հազար դրամ<br>•Համայնքի գույքի կառավարման թափանցիկության ապահովում – առկա է<br>•Համայնքի գույքի օտարման 2019թ. ծրագիր – առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>•Օտարվող համայնքային հողեր, քմ – 2380<br>Գործող վարձակալության պայմանագրեր | Սիսիանի համայնքապետարան | Գույքի օտարման և վարձակալության աճուրդներն ու մրցույթները կազմակերպող հանձնաժողովներ | | |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակներ.** | •Աղբահանության ծառայության | Համայնքի ղեկավարի | Համայնքի ղեկավար | 1 տարի | Դոնոր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| • Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br>• Ստեղծել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | հասանելիությունը բնակավայրերում -7 բնակավայր<br>• Խմելու ջրի մատակարարման նոր կառուցված արտաքին և ներքին համակարգերի ընդհանուր երկարությունը -43կմ<br>• Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, 60% | հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | | | կազմակեր-պության կողմից ֆինանսա-վորման ուշացում |
| **Ծրագիր 1. Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը մատուցվող աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը | Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում ըստ հաստատված սխեմաների և ժամանակացույցի – առկա է | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ | 1 տարի | Դոնոր կազմակեր-պության կողմից ֆինանսա-վորման ուշացում |
| **Միջոցառումներ.**<br>1. Աղբահանության կառավարման ռազմավարական պլանի մշակում<br>2. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ -ի միջոցով<br>3. Աղբահանության և սանիտարական մաքրման տարածքների սխեմաների, ժամանակացույցի կազմում և հաստատում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը - 11789<br>• Աղբահանության կառավարման ռազմավարական պլան – առկա է<br>• Միջհամայնքային համագործակցություն Գորայք համայնքի հետ (աղբահանություն) – առկա է<br>• Աղբահանության և սանիտարական մաքրման տարածքների հաստատված սխեմաներ և ժամանակացույց - առկա է<br>• Աղբահանության ծառայության հասանելիության ընդլայնում 4 բնակավայրերում՝ Տոլորս,Աղիտու,Նորավան և Աշոտավան<br>• Աղբի տեսակավորում – առկա է<br>• Աղբահանությունից օգտվող բնակավայրերի թիվը - 7 բնակավայր<br>• Սանիտարական մաքրում իրականացվող տարածքներ - 126627քմ | «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | Համայնքի ղեկավարի տեղակալ, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | • Նոր ձեռքբերված մեքենասարքավորումներ՝<br>Ջրցան, ավլող մեքենա - 1 միավոր<br>Աղբատար – 1 միավոր<br>Ինքնաթափ «Կամազ» -1 միավոր<br>Էքսկավատոր JCB – 1 միավոր<br>Նոր ստեղծված աշխատատեղեր - 3<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 18<br>• Տեխնիկական միջոցների թիվը – 6<br>• Աղբամանների թիվը - 151<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 225217.32հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ 109217.32, դոնոր կազմակերպություն ՀՏԶՀ՝ 116000.0 հազ.դրամ | | | | |
| **Ծրագիր 2. Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների պահպանում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Պահպանել և բարեկարգել համայնքի հանրային և կանաչապատ հատվածները | Բազմաբնակարան շենքերի սպասարկման որակի բարելավում նոր տեխնիկայի ձեռքբերման շնորհիվ 10% | Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ.**<br>1. Համայնքի բնակավայրերում շենքերի, շինությունների պահպանում<br>2. Հանրային և կանաչապատ տարածքների պահպանում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Վերանորոգված բազմաբնակարան շենքերի տանիքներ - 500 քմ<br>• Նոր ձեռքբերված ավտոաշտարակ – 1 միավոր<br>• Վերանորոգված բազմաբնակարան շենք – 1 /Սիսիան, Նար-Դոսի 5/<br>• Կանաչապատ տարածքների ոռոգման համակարգի սպասարկում – առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը - 10<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 90719.9 հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ 18219.9 հազ.դր., դոնոր կազմակերպություն ՀՏԶՀ՝ 52500.0 հազ.դր., պետական բյուջե՝ 19950.0 | Սիսիանի համայնքապետարան | Քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հազ.դրամ | | | | |
| **Ծրագիր 3. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Համայնքային ենթակառուցվածքների զարգացում | • Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ երթևեկության անվտանգության աճ - 5%<br>• Նոր կառուցված օրվա կարգավորիչ ջրամբարների թիվը/ծավալը(խմ) – 4/450 | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Դոնոր կազմակեր-պության ֆինանսա-վորման ուշացում |
| **Միջոցառումներ.**<br><br>1.Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում<br>2.Ապահովվել ջրամատակարարումը Թասիկ, Դարբաս, Հացավ, Ույծ, Տոլորս բնակավայրերում<br>3. Կառուցել նոր ՕԿՋ Դարբաս, Տոլորս, Հացավան, Թասիկ բնակավայրերում<br>4. Մուխուրթուրյան-Թասիկ ջրամատակարարման համակարգի գոյություն ունեցող ջրատարի վերակառուցում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Լուսավորված փողոցների քանակը – 72<br>• Նոր կառուցված ջրամատակարարման արտաքին համակարգ – 24կմ, Տոլորս, Դարբաս, Թասիկ, Ույծ բնակավայրեր<br>• Նոր կառուցված ջրամատակարարման բախշիչ ցանց – 19 կմ, Սիսիան, Թասիկ, Տոլորս, Դարբաս բնակավայրեր<br>• Նոր կառուցված ՕԿՋ-եր Դարբաս - 200մ³, Հացավան - 50 մ³, Տոլորս - 100մ³, Թասիկ - 100մ³<br>• Բարեկարգված դիտահորեր Սիսիան բնակավայրում- 180 հատ<br>• Ջրամատակարարման ապահովում- շուրջօրյա<br>• Թասիկ բնակավայր մատակարարող վերակառուցված ջրատար- 5.1 կմ<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը – 3 մարդ<br>• Տրանսպորտային միջոցների թիվը - 1 միավոր<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 1057520.9 հազ.դրամ, որից համայնքի բյուջե՝ 32520.9 հազ. դրամ, դոնոր կազմակերպ.՝ ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե ԾԻԳ՝ 1025000.0 հազ. դրամ | Սիսիանի համայնքապետարան | «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն | | |
| **Ոլորտ 3. Կրթություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.** Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական | • Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, 52% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| դաստիարակության որակյալ ծառայություններ | •Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների մեջ, 17% | արդյունքներ | | | ֆինանսակա և ռեսուրսների անբավարա րություն: |
| **Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում | •Նախադպրոցական կրթության ծառայության ընդլայնում բնակավայրերում – 3 բնակավայր | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Դոնոր կազմակեր-պության կողմից ֆինանսա-վորման ուշացում - |
| **Միջոցառումներ.**<br>1. Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-երի պահպանում<br>2. Կրթադաստիարակչական աշխատանքների բարելավում | **Ելքի ցուցանիշներ**<br>•Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 897<br>•Սննդի ապահովումը օրվա ընթացքում – 3 անգամ<br>•Նախակրթարանի վերանորոգված խմբասենյակներ - 3 /Որոտնավան, Իշխանասար, Վաղատին/<br>•Ծառայության հասանելիությունը բնակավայրերում – 10 բնակավայր<br>•Նոր ստեղծվող աշխատատեղերի թիվը – 18<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>•Աշխատակիցների թիվը – 172<br>•ՀՈԱԿ-ների թիվը - 4<br>•Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 302716.3 հազ. դրամ, այդ թվում՝ համայնքի բյուջե՝ 274716.3հազ. դրամ, «Կամրջակ» ՀԿ ՝ 28000.0 հազ.դրամ | Սիսիանի թվով 4 ՆՈՒՀ | Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ | | |
| **Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Արտադպրոցական որակյալ դաստիարակության կազմակերպում | Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների թվի ավելացում, 5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Համապատ ասխան մարդկային, նյութական և ֆինանսակա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Միջոցառումներ**<br>1. Երաժշտական կրթության ապահովում «Է.Այանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի միջոցով,<br>2. Պարի ուսուցման ապահովում «Սիսիանի համայնքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի միջոցով,<br>3. Շախմատի ուսուցում «Շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ի միջոցով,<br>4. Նկարչության, քանդակագործության ուսուցման ապահովում «Ջ.Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց»-ի միջոցով<br>5. Ֆուտբոլի ուսուցման ապահովում «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ի միջոցով<br>6. «Ա.Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի պահպանում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 654<br>• Երաժշտական կրթություն ստացող երեխաների թիվը – 187<br>• Շախմատի դպրոց հաճախողների թիվը – 95<br>• Արվեստի դպրոց հաճախողների թիվը – 70<br>• Գեղարվեստի դպրոց հաճախողների թիվը – 87<br>• Ֆուտբոլի դպրոց հաճախողների թիվը – 65<br>• Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն հաճախողների թիվը - 150<br>• Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի տես. կշիռը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, 19%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը – 95<br>• ՀՈԱԿ-ների թիվը-6<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 127192.2հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքի արտադպրոցական հաստատություններ | Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ | | և ռեսուրսների անբավարարություն: |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, 40% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ակտիվացնել համայնքի | Մշակութային միջոցառումները ավելացել են, 10% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, | Կրթության, մշակույթի, սպորտի, | 1 տարի | Համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մշակութային կյանքը | | մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ | | մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>1. Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը<br>2. Ապահովել «Հ. Սահյանի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատանքների կազմակերպումը<br>3. Ապահովել գրադարանային ծառայության մատուցումը | **Ելքի ցուցանիշներ**<br>• Մշակութային միջոցառումների թիվը – 68<br>• Միջոցառումներին մասնակիցների թիվը – 20000<br>• Մշակութային կյանքի ակտիվացում - 10%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը – 8<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 63887.0հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքապետարան | «Հ.Սահյանի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն | 1 տարի | |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը | Ոռոգման համակարգ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի կազմում 63% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Խթանել գյուղատնտեսության զարգացումը** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Ապահովել վարելահողերի ոռոգումը | ~~Ոռոգվող հողերը ընդլայնվել են – 32 հա~~ | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորման ուշացում |
| **Միջոցառումներ.**<br>• Կազմակերպել համայնքի ոռոգման ցանցի անխափան աշխատանքը | ~~**Ելքի ցուցանիշներ**~~<br>• Ոռոգվող հողերի մակերեսը - 251 հա<br>• Վթարների թվի նվազեցում - 5%<br>• Ոռոգման համակարգից օգտվող | Սիսիանի համայնքապետարան | Համայնքի ղեկավարի տեղակալ, Գյուղատնտեսության և բնապահպանության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| • Մուցք բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում | բնակավայրերի թիվը – 19<br>• Նոր ոռոգման ցանց - 2.5կմ<br>• Նոր ցանցից օգտվողների թիվը - 310 մարդ<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Սպասարկվող ոռոգման ցանցերի երկարությունը – 60.5 կմ<br>• Աշխատակիցների թիվը – 4<br>• Տեխնիկական միջոցների թիվը – 2<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 57000.0 հազ.դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ 2000.0 հազ. դր., «Կամրջակ» ՀԿ՝ 11000.0 հազ.դր., ՀՏԶՀ – 44000.0 հազ. դրամ | | բաժնի պետ | | |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը՝ ճանապարհային նշանների կահավորման միջոցով | Ճանապարհների կահավորման միջոցով երթևեկության անվտանգության աճ - 5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Ճանապարհների պահպանում և շահագործում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել համայնքային ճանապարհների սպասարկումն ու շահագործումը | Ճանապարհային նշանների և գծանշումների բացակայության պատճառով տեղի ունեցած վթարների թիվը-0 | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>Ճանապարհային նշանների տեղադրում և գծանշում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Տեղադրված ճանապարհային երթևեկության նշանների թիվը - 25 նշան<br>• Գծանշված փողոցների թիվը - 25 փողոց<br>• Հետիոտնի և տրանսպորտի հարմարավետ երթևեկություն – առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Համայնքային փողոցների թիվը - 25 | Սիսիանի համայնքապետարան | Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | փողոց<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 1500.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | | | | |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին | Համայնքի կողմից սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, 18% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը | Դրամական աջակցությունների մասին սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի արձանագրությունները –առկա են | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ | 1 տարի | Համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>1. Դրամական օգնությունների կազմակերպում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աջակցություն ստացած սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող բնակիչների թիվը - 100<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքապետարան | Սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողով | | |

### 3. Համայնքային գույքի կառավարման 2019թ. ծրագիրը

Աղյուսակ 6. Համայնքի գույքի կառավարման 2019թ. ծրագիրը

| Հ/հ | Գույքի անվանումը | Հասցեն կամ ծածկագիրը | Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ²) | Վիճակի գնահատումը | Գույքի կառավարման գործողություն | Այլ բնութագրիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0246-0015 | 300 | պարապուրդ | օտարել | |
| 2 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0094-0223 | 100 | պարապուրդ | օտարել | |
| 3 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0234 | 33 | պարապուրդ | օտարել | |
| 4 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0240-0020 | 250 | պարապուրդ | օտարել | |
| 5 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0224 | 700 | պարապուրդ | օտարել | |
| 6 | Գյուղարտադրական նշանակության | 09-006-0106-0050 | 1000 | պարապուրդ | օտարել | |
| 7 | Բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0094-0249 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 8 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0235 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 9 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0109-0019 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 10 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0224-0187 | 60 | պարապուրդ | վարձակալություն | |
| 11 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0249-0154 | 135 | պարապուրդ | վարձակալություն | |

## 4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը

Աղյուսակ 7. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
